



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.երևան


«08» 02 2007թ. N 31.28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2005Թ ՄԱՅԻՍԻ 18 Ի ԹԻՎ 109 Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005թ մայիսի 18-ի «Համապատասխանության գնահատման բնագավառում փորձագետների որակավորման կանոնակարգը հաստատելու և որակավորման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 109 Ա հրամանի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները

- 1 Հրամանի անվանման մեջ «կանոնակարգը» բառը փոխարինել «ընթացակարգ» բառով,
- 2 Հրամանի 1-ին կետը ուժը կորցրած ճանաչել,
- 3 Հաստատել Համապատասխանության գնահատման ընթացակարգում մասնագետներին որպես փորձագետներ որակավորման ընթացակարգը համաձայն հավելված 1-ի,
- 4 Հաստատել փորձագետների որակավորման ոլորտները համաձայն հավելված 2-ի
- 5 Մույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Գ Բադալյանին


Գ Բադալյան

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2007թ «08» 02 N 31.28 հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱԳԱՏՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

Սույն ընթացակարգը կադավորում է համապատասխանության գնահատման բնագավառում մասնագետներին, որպես փորձագետներ որակավորման հետ կապված հարաբերությունները և սահմանում է փորձագետներին ներկայացվող պահանջները

1.1 Համապատասխանության գնահատման բնագավառում մասնագետներին որպես փորձագետներ որակավորումը իրականացվում է «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն ընթացակարգին համապատասխան

1.2 Համապատասխանության գնահատման բնագավառում մասնագետների որակավորման նպատակներն են՝

ա) համապատասխանության գնահատման բնագավառի հայտարարված ոլորտներում (հավելված 2-րդ) մասնագետի իրազեկության հավաստումը,

բ) համապատասխանության գնահատման բնագավառի մասնագետներին իրազեկության բարձրացումը,

գ) համապատասխանության գնահատման բնագավառը իրազեկ մասնագետներով համալրումը:

1.3 Մասնագետներին փորձագետի որակավորում կարող է տրվել համապատասխանության գնահատման հետևյալ ձևերում՝

ա) համապատասխանության հավաստում (սերտիֆիկացում),

բ) հավատարմագրում,

գ) պետական վերահսկողություն

1.4 Համապատասխանության հավաստման (սերտիֆիկացման) գործընթացներում մասնագետների գործունեության որակավորման ենթակա ուղղություններն են՝

ա) որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացում,

բ) էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացում,

գ) արտադրանքի համապատասխանության հավաստում,

դ) ծառայությունների սերտիֆիկացում

1.5 Հավատարմագրման գործընթացում մասնագետների գործունեության որակավորման ենթակա ուղղություններն են

ա) որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրում,

բ) էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրում,

գ) արտադրանքի սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրում

դ) ծառայությունների սերտիֆիկացման մարմինների հավատարմագրում,

ե) անձանց սերտիֆիկացման մարմինների հավատարմագրում

1.6 Պետական վերահսկողության գործառնություններում մասնագետների գործունեության որակավորման ենթակա ուղղությունն է՝

ա) արտադրանքի, ծառայությունների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների պահպանման պետական վերահսկողությունը

1.7 Մասնագետների որակավորումը կատարվում է հավելված 2-ում նախատեսված փորձագետների որակավորման ոլորտներին համապատասխան

Որակի և էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման մասնագետների որակավորումը իրականացվում է առանց հաշվի առնելու հավելված 2-ով նախատեսված որակավորման ոլորտները, իսկ արտադրանքի և ծառայությունների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների պահպանման պետական վերահսկողության մասնագետների որակավորումը ընդգրկում է նշված որակավորման բոլոր ոլորտները միաժամանակ

1.8 Փորձագետի որակավորում ստանալու համար մասնագետը պետք է՝

ա) բավարարի սույն ընթացակարգի 4-րդ բաժնով սահմանված փորձագետներին ներկայացվող պահանջներին,

բ) անցնի համապատասխան բնագավառի լրացուցիչ մասնագիտական ուսուցում, (տեսական վերապատրաստում) և ներկայացնի համապատասխան վկայական,

գ) կարողանա հանձնել թեսթավորման առաջադրանքը և անցնել որակավորման հանձնաժողովի հետ հարցազրույցը

1.9 Մասնագետի որակավորումն իրականացվում է երկկողմ կնքված պայմանագրի հիման վրա, որտեղ պետք է նախատեսված լինեն որակավորման ժամկետը, որակավորման աշխատանքների համար սահմանված վճարման չափը և երկկողմ համաձայնեցված այլ պարտավորությունները Պայմանագիրը կարող է կնքվել մասնագետի կամ այն կազմակերպության հետ, որտեղ նա աշխատում է

1.10 Որակավորման գործընթացում օգտագործվող ձևաթղթերը ապահովում է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ

1.11 Որակավորման գործընթացը իրականացվում է հայերեն լեզվով:

2 Հասկացություններ

Սույն կանոնակարգում կիրառվում են հետևյալ հասկացությունները

փորձագետ ֆիզիկական անձ որը որակավորվել է համապատասխանության գնահատման բնագավառի մեկ կամ մի քանի ոլորտներում համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնելու համար և ստացել է փորձագետի վկայագիր

փորձագետի իրազեկություն համապատասխանության գնահատման որոշակի ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու համար մասնագետի անհրաժեշտ գիտելիքների և աշխատանքային ունակությունների ամբողջություն

փորձագետի որակավորման վկայագիր Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ կողմից տրված փաստաթուղթ, որով հավաստվում է համապատասխանության գնահատման բնագավառում սահմանված պահանջներին անձի իրազեկությունը համապատասխանության գնահատման բնագավառի վկայագրով սահմանված ոլորտում (ոլորտներում)

որակավորում գործընթաց, որի ժամանակ իրականացվում է «Ստանդարտացման մասին» և «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով այլ իրավական ակտերով և ԽՍՀՄ/ԻԷԿ 17000 շարքի միջազգային և համապատասխանության հավաստման համակարգի ստանդարտներով սահմանված համապատասխանության գնահատման բնագավառում մասնագետների իրազեկության հավաստումը և որակավորման վկայագրի հանձնումը

որակավորման հանձնաժողով՝ (այսուհետ հանձնաժողով) Համապատասխանության գսառտումսս բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի կողմից ստեղծված հանձնաժողով որը իրավասու է իրականացնելու համապատասխանության գնահատման բնագավառում մասնագետների իրազեկության գնահատում

3 Փորձագետների որակավորման գործընթացի կազմակերպական կառուցվածքը

3.1 Համապատասխանության գնահատման բնագավառում մասնագետների որակավորման գործընթացը կազմակերպվում և իրականացնում է «Ստանդարտների

ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ Ընկերություն)

3.2 Որակավորման գործընթացի կազմակերպման և աշխատանքների կատարման նպատակով Ընկերությունը

ա) կազմակերպում և իրականացնում է մասնագետների որակավորման բարձրացման սեմինարները

բ) մշակում և հաստատում է որակավորման գործընթացի կազմակերպամեթոդական փաստաթղթերը

գ) ցուցաբերում է մեթոդական օգնություն որակավորման գործընթացի մասնակիցներին,

դ) սահմանում է որակավորման աշխատանքների սակագները և վճարման կարգը

ե) ստեղծում է թեսթավորման աշխատանքային խումբ,

զ) որակավորման հանձնաժողովի որոշումներին համապատասխան տալիս է որակավորման վկայագրեր,

է) վարում է փորձագետների որակավորման վկայագրերի գրանցամատյանը

3.3 Թեսթավորման աշխատանքային խումբը

ա) կազմում է թեսթերը,

բ) անցկացնում է մասնագետների թեսթավորում,

գ) որակավորման հանձնաժողովին է ներկայացնում մասնագետների թեսթավորման արդյունքները

3.4 Որակավորման հանձնաժողովը

ա) անցկացնում է մասնագետների հետ հարցազրույց,

բ) հրապարակում է որակավորման արդյունքները

4 Փորձագետներին ներկայացվող պահանջները

4.1 Փորձագետները պետք է ունենան բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն և անհրաժեշտ իրազեկություն որակավորման հայտարարված ոլորտում իրենց գործառույթներն իրականացնելու համար

4.2 Փորձագետները պետք է ունենան մեկ տարուց ոչ պակաս աշխատանքային ստաժ

4.3 Փորձագետները պետք է գիտենան

ա) ստանդարտացման չափազիտության և համապատասխանության գնահատման բնագավառների Հայաստանի Հանրապետության օրենքները

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները և այլ իրավական ակտերը

բ) համապատասխանության հավաստման բնագավառի հիմնադրությամբ ստանդարտները,

գ) հայտարարված ոլորտին վերաբերվող Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերի դրույթները և ստանդարտները

4.4 Որակի և էկոլոգիական կառավարման համակարգերի (այսուհետ կառավարման համակարգ) սերտիֆիկացման փորձագետները պետք է կարողանան

ա) կազմակերպել կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքները և ապահովել համապատասխանության սերտիֆիկատի հանձնման հիմնավորումը,

բ) իրականացնել կառավարման համակարգի փաստաթղթերի վերլուծությունը, գնահատել կառավարման համակարգի ստանդարտների պահանջներին դրանց համապատասխանությունը և որոշում ընդունել փաստաթղթերի վերաբերյալ,

գ) կազմել և իրականացնել կազմակերպությունում կառավարման համակարգի գործունեության գնահատման ծրագիրը,

դ) իրականացնել կազմակերպությունում համապատասխանության գնահատման ամիրաժեշտ ընթացակարգերը, կիրառել գնահատման մեթոդները,

ե) իրականացնել կառավարման համակարգի փաստաթղթերի և ստանդարտների պահանջներին կառավարման համակարգի վիճակի համապատասխանության գնահատումը,

զ) վերլուծել և գնահատել արտադրանքին ներկայացվող պահանջների կատարումն ապահովող կառավարման համակարգի հնարավորությունը,

է) ընդունել որոշում գնահատման արդյունքներով, կազմել գնահատման հաշվետվությունը,

ը) ձևակերպել կառավարման համակարգի համապատասխանության սերտիֆիկատը,

թ) կազմակերպել և իրականացնել սերտիֆիկացված կառավարման համակարգի համապատասխանության հսկողությունը, դրա արդյունքներով ձևակերպել փաստաթղթերը և որոշումների նախագծերը

4.5 Արտադրանքի համապատասխանության հավաստման փորձագետները պետք է ունենան գիտելիքներ

ա) համապատասխանության իավաստման հիմնադրությամբ ստանդարտներով որոշակի արտադրատեսակների վրա տարածվող տեխնիկական կանոնակարգերով, ինչպես նաև ստանդարտացման նորմատիվ և տեխնիկական

(պրակտիկական և տեխնոլոգիական) փաստաթղթերով սահմանված պահանջների վերաբերյալ

բ) արտադրանքի բնութագրերի, կառուցվածքի, արտադրության տեխնոլոգիաների, նյութերի բաղադրության վերաբերյալ

գ) նորմատիվ փաստաթղթերով սահմանված արտադրանքի փորձարկման և պարամետրերի չափման մեթոդների վերաբերյալ,

դ) հումքի, նյութերի կոնստրուկտիվորման արտադրատեսակների մուտքային վերահսկողության, արտադրման գործընթացում գտնվող և պատրաստի արտադրանքի վերահսկման վերաբերյալ,

ե) փորձարկման սարքավորումների, չափման միջոցների չափումների միասնականության ապահովման բնագավառի հիմնադրությամբ ստանդարտներով սահմանված պահանջների վերաբերյալ,

զ) տեխնոլոգիական սարքավորումների տեխնիկական սպասարկման վերաբերյալ,

է) փորձարկումների և չափումների արդյունքների վերլուծության մեթոդների վերաբերյալ,

ը) արտադրանքի որակի և հուսալիության գնահատման վիճակագրական մեթոդների վերաբերյալ

4.6 Արտադրանքի համապատասխանության հավաստման փորձագետները պետք է կարողանան

ա) կազմակերպել արտադրանքի սերտիֆիկացման աշխատանքները և ապահովել սերտիֆիկատի հանձնման հիմնավորումը,

բ) իրականացնել արտադրանքի սերտիֆիկացման համար հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի վերլուծությունը և կայացնել որոշում դրանց վերաբերյալ,

գ) ընտրել սերտիֆիկացման սխեման,

դ) կատարել փորձարկումների համար նմուշառում

իրականացնել փորձարկումների արդյունքների վերլուծությունը և թողարկվող արտադրանքի որակի կայունության գնահատումը համապատասխանության գնահատման բնագավառի իրավական ակտերով և ստանդարտներով սահմանված կարգի համաձայն

ե) կատարել արտադրանքի նույնականացում

զ) ձևակերպել համապատասխանության սերտիֆիկատը,

ե) կազմակերպել և իրականացնել սերտիֆիկացված արտադրանքի համապատասխանության հսկողությունը

ը) գնահատել ուղղիչ գործողությունները և վերահսկել դրանց կատարումը

4 7 Համապատասխանության հայտարարագրով (այսուհետև՝ հայտարարագիր) արտադրանքի համապատասխանության հավաստման ժամանակ փորձագետները պետք է կառողանան

ա) կազմակերպել հայտարարագրի վավերացման աշխատանքները,

բ) հավաստել հայտարարագրի հայտ ներկայացնող հայտատուի իրավասությունը

գ) իրականացնել հայտատուի կողմից ռեոնաւագված փաստաթղթերի փորձաքննությունը և կայացնել որոշում դրանց վերաբերյալ,

դ) ստուգել տվյալ արտադրանքի համապատասխանության հավաստման համար նախատեսված փաստաթղթերի լրիվությունը և հայտարարագրում դրանց նշման ճշտությունը,

ե) ստուգել հայտարարագրի լրացման ճշտությունը,

զ) նույնականացնել արտադրանքը,

է) հիմնավորել հայտարարագրի վավերացման համար անհրաժեշտ նյութերի ամբողջականությունն ու հավաստիությունը

4 8 Ծառայությունների սերտիֆիկացման փորձագետները պետք է ունենան գիտելիքներ

ա) ծառայությունների համապատասխանության հավաստման հիմնադրույթային ստանդարտների, որոշակի ծառայության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի պահանջների վերաբերյալ,

բ) ծառայության սպառողական բնութագրերի վերաբերյալ,

գ) ծառայության մատուցման անվտանգության պահանջների վերաբերյալ,

դ) ծառայության որակի վրա ազդող գործոնների և պայմանների վերաբերյալ,

ե) ծառայության մատուցման տեխնոլոգիաների վերաբերյալ

զ) ծառայության որակի գնահատման մեթոդների վերաբերյալ

4 9 Ծառայությունների սերտիֆիկացման փորձագետները պետք է կառողանան

ա) կազմակերպել ծառայությունների սերտիֆիկացման աշխատանքները, պահպանել սերտիֆիկացման կանոններն ու ընթացակարգերը և ապահովել համապատասխանության սերտիֆիկատի հանձնման հիմնավորումը

բ) օգտվել սերտիֆիկացման ժամանակ կիրառվող իրավական նորմատիվ, տեխնիկական (տեխնոլոգիական) և այլ փաստաթղթերից,

գ) մշակել անվտանգության պահանջներին ծառայության համապատասխանության գնահատման մեթոդիկան (ընթացակարգը),

դ) իրականացնել ծառայության գործընթացի գնահատումը,

ե) իրականացնել սահմանված պահանջներին ծառայություն մատուցող կազմակերպության համապատասխանության գնահատումը,

զ) իրականացնել որակի կառավարման համակարգի գնահատումը,

է) ձևակերպել փորձաքննության արդյունքների արձանագրությունը,

ը) ձևակերպել համապատասխանության սերտիֆիկատը,

թ) իրականացնել սերտիֆիկացված ծառայության համապատասխանության հսկողությունը

ժ) գնահատել ուղղիչ գործողությունները և վերահսկել դրանց կատարումը

4 10 Հավատարմագրման փորձագետները պետք է ունենան գիտելիքներ

ա) սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրման չափանիշների վերաբերյալ,

բ) սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության վերաբերյալ,

գ) չափումների միասնականության ապահովման ազգային համակարգի ստանդարտների վերաբերյալ,

դ) Հայաստանի Հանրապետությունում գործող արտադրանքի, ծառայությունների դասակարգիչների և արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի վերաբերյալ,

ե) կառավարման համակարգերի սկզբունքների, կառուցվածքի և աուդիտի ընդհանուր սկզբունքների վերաբերյալ,

զ) որակի ձեռնարկների մշակման ղեկավար ցուցումների վերաբերյալ

4 11 Արտադրանքի սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրման փորձագետները սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրված ուղորմներում ընդգրկված արտադրանքների շրջանակներում պետք է ունենան նաև գիտելիքներ

ա) արտադրանքի կոնստրուկտորական, տեխնոլոգիական առանձնահատկությունների օգտագործվող (թույլատրվող) հիմնական և օժանդակ նյութերի կոմպլեկտավորող սարքերի, դրանց վրա տարածվող ազգային, միջպետական միջազգային ստանդարտների վերաբերյալ,

բ) արտադրանքը ստրկայացվող և դրանց պրա տարածվող տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների վերաբերյալ,

գ) արտադրանքի պարտադիր պահանջների ստուգման և փորձարկման մեթոդների ինչպես սակ կիրառվող չափման միջոցների և փորձարկման սարքավորումների ճշտության դասերի վերաբերյալ

4 12 Ծառայությունների սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման փորձագետները պետք է բավարարեն նաև սույն ընթացակարգի 4 8-րդ և 4 9 կետերով նախատեսված պահանջներին

4 13 Կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման փորձագետները պետք է բավարարեն նաև 4 4-րդ կետով նախատեսված պահանջներին և փորձագետներին ներկայացվող ընդհանուր պահանջներին

4 14 Հավատարմագրման փորձագետները պետք է կարողանան

ա) կազմակերպել և իրականացնել հավատարմագրման նպատակով ներկայացված փաստաթղթերի փորձաքննությունը,

բ) փորձաքննության արդյունքների վերաբերյալ ձևակերպել եզրակացություն,

գ) իրականացնել համապատասխանության գնահատում,

դ) գնահատման արդյունքների հիման վրա կազմել գնահատման հաշվետվություն,

ե) հիմնավորել և պաշտպանել իր կողմից ներկայացված փորձաքննության և եզրակացության արդյունքները

4 15 Արտադրանք, ծառայությունների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների պահպանման պետական վերահսկողության փորձագետները պետք է բավարարեն սույն ընթացակարգի 4 1 և 4 2-րդ կետերով նախատեսված պահանջներին, այդ թվում

ա) արտադրանքի համապատասխանության հավաստման, ծառայությունների սերտիֆիկացման, արտադրանքի և ծառայությունների փորձարկումներ իրականացնող փորձագետներին ներկայացվող պահանջներին

4 16 Պետական վերահսկողության փորձագետները պետք է կարողանան

ա) տնտեսավարող սուբյեկտներում կազմակերպել և իրականացնել համընթացաբարձր նախատեսված պետական վերահսկողություն,

բ) «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքները ձևակերպել ակտով լրացնել և տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներին հանձնել համապատասխան կարգադրագրեր,

գ) Կլխավոր պետական տնտեսիկն սերվայացնել առաջարկություններ վերջինիս իրավասության սահմաններում

դ) պաշտպանել իր ընդունած որոշումները տեխնիկական կազմակերպչական և օրենսդրական հիմնավորումներով

4 17 Փորձագետներն իրենց գործունեությունը հաջողությամբ իրականացնելու համար պետք է օժտված լինեն հետևյալ անձնական հատկանիշներով

ա) օբյեկտիվությամբ, սկզբունքայնությամբ կազմակերպվածությամբ, պատասխանատվությամբ,

բ) գսավածությամբ, ըարյացկամությամբ կամայնությամբ համագործակցելու ունակությամբ

գ) վերլուծելու, տրամաբանելու, իրենց կարծիքը փաստարկված պաշտպանելու և կարևորը ոչ էականից տարբերելու ունակությամբ

դ) փաստացի տվյալներն անկողմնակալ գնահատելու ունակությամբ,

4 18 Փորձագետներն իրենց գործունեության իրականացման համար պետք է ունենան ղեկավարելու անհրաժեշտ փորձ, ապահովեն իրենց գործունեության ընթացքում ստացած տեղեկության գաղտնիությունը

4 19 Փորձագետները պետք է մշտապես պահպանեն իրենց գործունեությանն առնչվող ստանդարտների, հավատարմագրման, սերտիֆիկացման և փորձարկումների ժամանակակից պահանջների, մեթոդների ու մեթոդիկաների իմացության հարցերում իրազեկությունը հետևյալ ճանապարհով

ա) ուսուցում,

բ) գործունեության համապատասխան ուղղությամբ մասնագիտական գիտելիքների ինքնուրույն բարձրացում

գ) մասնակցություն սեմինարներին, գիտաժողովներին

5 Հանձնաժողովի աշխատակարգը

5 1 Հանձնաժողովի խնդիրներն են

ա) ապահովել համապատասխանության գնահատման բնագավառի մասնագետ ներին որպես փորձագետներ որակավորվելու հավասար մատչելիությունը իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան

բ) ապահովել անցկացվող որակավորման գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունը

5 2 Հանձնաժողովը՝

ա) ստանում է թեսթավորման փուլն անցած մասնագետների ցուցակը,

բ) անցկանացնում է հարցազրույց մասնագետների հետ

գ) հրապարակում է որակավորման արդյունքները

դ) իրականացնում է սույն ընթացակարգով սահմանված իր իրավասությանը

վերապահված այլ լիազորություններ

5 3 Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում է նիստերի միջոցով

5 4 Հանձնաժողովի նիստերն իրավազոր են դրա անդամների 2 / 3-ի մասնակցության դեպքում

5 5 Հանձնաժողովի նախագահը

ա) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները,

բ) վարում է հանձնաժողովի նիստերը,

գ) իրականացնում է սույն ընթացակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ

5 6 Հանձնաժողովի քարտուղարը

ա) թեսթավորման աշխատանքային խմբից ստանում է մասնագետների թեսթավորման արդյունքները,

բ) հանձնաժողովին է ներկայացնում մասնագետների անձնական գործերը և թեսթավորման արդյունքները,

գ) արձանագրում է հանձնաժողովի նիստերը:

5 7 Հանձնաժողովի անդամը՝

ա) մասնակցում է հարցազրույցի անցկացմանը և տալիս հարցեր,

բ) մասնակցում է հարցազրույցի արդյունքում հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր մասնագետի համար անցկացվող քվեարկություններին

գ) ստորագրում է որակավորման վերաբերյալ որոշման արձանագրությունը իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում գրառում է «Հատուկ կարծիքը կցվում է» բառերը

դ) ծանոթանում է նիստերի արձանագրություններին,

6 Փորձագետների որակավորումը

6 1 Հանձնաժողովի կողմից համապատասխանության գնահատման բնագավառի մասնագետներին որպես փորձագետ որակավորելու համար հիմք է ընդունվում թեսթային առաջադրանքների կատարման և հարցազրույցի դրական արդյունքները

6 2 Փորձագետների որակավորման գործընթացը իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ՝

գ) թեսթավորման անցկացում

դ) հարցազրույցի անցկացում և որակավորման վերաբերյալ որոշման ընդունում

ե) որակավորման վկայագրի գրանցում և հանձնում

6 3 Հայտը ներկայացվում է ընկերությանը ձև 1-ին համապատասխան որին կից ներկայացվում է

ա) անհատական թեթյու ըստ ձև 2 ի

բ) հիմնարար և համապատասխանության գնահատման բնագավառի լրացուցիչ մասնագիտական ուսուցման դիպլոմների և վկայականների պատճենները,

գ) աշխատանքային ստաժը (այդ թվում նաև համապատասխանության գնահատման բնագավառում) հաստատող փաստաթղթեր

6 4 Հայտը ստանալուց հետո ընկերությունը

ա) եռօրյա ժամկետում քննարկում է հայտը,

բ) սկսում է որակավորման գործընթացը հայտատուի հետ կնքելով համապատասխան պայմանագիր,

գ) մերժում է հայտը, եթե բացակայում է սույն ընթացակարգի 6 3 կետով նախատեսված փաստաթղթերից առնվազն մեկը

6 5 Հայտի մերժման մասին որոշումը տրվում է մասնագետին համապատասխան հիմնավորումներով

6 6 Մասնագետը հայտի մերժման մասին ընդունված որոշման հետ համաձայն չլինելու դեպքում կարող է դիմել ընկերության բողոքարկման հանձնաժողովին

7. Թեսթավորման անցկացումը

7 1 Թեսթավորման աշխատանքային խումբը դրական որոշում ստացած հայտերն ստանալուց հետո կազմակերպում է թեսթավորման գործընթացը

7 2 Թեսթավորման աշխատանքային խումբը կազմում է թեսթավորման առաջադրանքը, բաղկացած 40 հարցերից որից 30-ն ընդհանուր մասնագիտական իսկ 10-ը որակավորման ոլորտին առնչվող նեղ մասնագիտական հարցեր

7 3 Որակավորման ոլորտին համապատասխանող առաջադրանքներում ընդգրկվող հարցերի չափաբաժինները տրված են ձև 3-ում

7 4 Թեսթավորման յուրաքանչյուր մասնակցի համար թեսթավորման աշխատանքային խումբը համակարգչի միջոցով ձևավորում է թեսթավորման առաջադրանք և դրան համապատասխան անփոփաթեթը 3ուրաքանչյուր թեսթավորման առաջադրանք ս դրան 1 համապատասխան անփոփաթեթը

թեսթավորման առաջադրանք և դրան համապատասխան ամփոփաթերթը բաղկացած է համարակալված հարցերից (խնդրիներից) և դրանց երեք ենթադրյալ պատասխաններից, որոնցից մեկը միանշանակ ճիշտ պատասխան է

7.5 Թեսթավորման առաջադրանքները և դրանց համապատասխան ամփոփաթերթերը մասնագետներին տրամադրվում է միաժամանակ

7.6 Մասնագետները թեսթավորման առաջադրանքի և ամփոփաթերթերի վրա կրացնում են իրենց անունը, ազգանունը և ծանոթանում են առաջադրանքի հետ Յուրաքանչյուր առաջադրանքի վերաբերյալ ամփոփաթերթում, դրա համար նախատեսված հատուկ համարակալված վանդակում, կատարում են նշում ընտրելով մեկ պատասխանը

7.7 Ամփոփաթերթի վրա ջնջումներ, ուղղումներ կամ վերականգնումներ կատարելն անթույլատրելի է Այդ դեպքում տվյալ հարցի պատասխանը համարվում է սխալ պատասխան

7.8 Թեսթավորման առաջադրանքները կատարելու համար մասնագետներին տրամադրվում է 60 րոպե,

7.9 Առաջադրանքների կատարման համար հատկացված ժամանակն սպառվելուց հետո մասնագետները ամփոփաթերթը և թեսթավորման առաջադրանքները հանձնում են թեսթավորման աշխատանքային խմբին

7.10 Գրավոր աշխատանքների ստուգման համար, օպերատորը համակարգչի միջոցով դուրս է բերում յուրաքանչյուր թեսթավորման առաջադրանքի ճիշտ պատասխանները, որոնց հիման վրա պատրաստվում է ձևանմուշ

7.11 Թեսթավորման աշխատանքային խումբը ձևանմուշի միջոցով ստուգում է մասնագետի կողմից ամփոփաթերթում նշված պատասխանները Յուրաքանչյուր մասնագետի համար հաշվարկվում է հավաքած միավորների քանակը և տոկոսը

7.12 Թեսթավորման արդյունքների յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է մեկ միավոր իսկ սխալ պատասխանը զրո միավոր Սխալ պատասխան է համարվում ոչ միայն ոչ ճիշտ պատասխանի նշումը, այլև մեկից ավելի պատասխաններ նշելը, որևէ պատասխան չնշելը, ինչպես նաև ամփոփաթերթի վրա ջնջումներ, ուղղումներ կամ վերականգնումներ կատարելը

7.13 Ստուգման աշխատանքներն ավարտելուց հետո թեսթավորման մասնակիցներին տեղեկացնում են իրենց հավաքած միավորների քանակի և տոկոսի մասին

7.14 Մասնագետը, որակավորման հաջող հարցազրույցի փուլ է անցնում թեսթավորման 40 հարցերից առնվազն 36 -ին ճիշտ պատասխանելու դեպքում Թույլատրվում է որակավորման ոլորտին առնչվող մեղ մասնագիտական հարցերից միայն մեկ հարցի սխալ պատասխան

8. Հարցազրույցի անցկացումը

8.1 Հարցազրույցը անցկացվում է որակավորման հանձնաժողովի կողմից

8.2 Հանձնաժողովը յուրաքանչյուր մասնագետի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին

8.3 Հարցազրույցի արդյունքների ամփոփման համար անցկացվում է բաց քվեարկություն

8.4 Քվեարկության արդյունքում դրական է համարվում այն որոշումը, որն ստացել է նիստին մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներ Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է

8.5 Հարցազրույցի ավարտից հետո հանձնաժողովն ամփոփում է որակավորման արդյունքները և յուրաքանչյուր մասնագետի համար կազմում է որակավորման թերթ՝ համաձայն ձև-4-ի

8.6 Հատուկ կարծիք ունեցող անդամներն ստորագրելիս նշում են հատուկ կարծիքի մասին, ստորագրության կողքին գրառելով «Հատուկ կարծիքը կցվում է» բառերը

8.7 Մասնագետը որակավորման ավարտից հետո ծանոթանում է որակավորման թերթի հետ

8.8 Որակավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մասնագետը դրանք կարող է բողոքարկել ընկերության բողոքարկման հանձնաժողովին

8.9 Բողոքարկման հանձնաժողովը քննարկում է բողոքը և կայացնում որոշում Բողոքարկման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մասնագետը կարող է բողոքարկել համապատասխանության գնահատման ազգային մարմին կամ դատարան

8.10 Հանձնաժողովը ընկերությանն է փոխանցում հանձնաժողովի որոշումները արձանագրությունները, որակավորման թերթերը սահմանված կարգով պահպանելու և արխիվացնելու համար

8.11 Փորձագետների գործերը ընկերությունում պահպանվում են 3 տարի

9. Որակավորման վկայագրի գրանցումը և հանձնումը

9.1 Հանձնաժողովի կողմից որակավորման թերթն ստանալուց հետո ընկերությունը եռօրյա ժամկետում մասնագետին հանձնում է համապատասխանության գնահատման բնագավառի փորձագետի որակավորման վկայագրի և գրանցում վկայագրի ձևը տրված է ձև-5-ում

9.2 Փորձագետի վկայագրի գործողության ժամկետը սահմանվում է 3 տարի

Համապատասխանության գնահատման
բնագավառում փորձագետների
որակավորման ընթացակարգի

Հայտի ծևը

Հ Ա Յ Տ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿՎՈՐՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

1 Ցանկանում եմ մասնակցել համապատասխանության գնահատման բնագավառի

_____ նշվում է գործունեության ուղղությունը և ոլորտը

փորձագետների որակավորման գործընթացին, որի համար

ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1 Անհատական թերթ

2 Աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթ (եր) .

3 Կրթությունը և որակավորման բարձրացման ուսուցումը հաստատող
փաստաթղթերի պատճենները

ստորագրությունը

անվանատառը, ազգանունը

« _____ » _____ 200 թ

Համապատասխանության գնահատման
բնագավառում փորձագետների
որակավորման ընթացակարգի

Անհատական թերթի ծևը

Անհատական թերթ

Փորձագետի

Անուն, ազգանուն, հայրանուն _____

Կրթությունը, ուսումնական հաստատության անվանումը և ավարտման տարին _____

Մասնագիտությունը, ըստ կրթության _____

Գիտական աստիճան _____

Գիտական կոչումը _____

Լեզուն որով կարող է անցկացնել աուդիտը _____

(լրացվում է միայն կառավարման համակարգերի
փորձագետի համար)

Աշխատանքի վայրը _____

Կաշտոնը, հեռախոսի համարը _____

Աշխատանքային ստաժը, ներառյալ արտադրանքի (ծառայության) և որակի
կառավարման համակարգերի սերտիֆիկացման բնագավառներում _____

Կազմակերպության անվանումը, որտեղ անցել է լրացուցիչ մասնագիտական
ուսուցում, վկայականի համարը տարին _____

_____ 200 թ

_____ (մասնագետի ստորագրությունը)

Թեսավորման աշխատանքային խմբի կողմից կազմվող թեսթերում (առաջադրանքներում) ընդգրկվող հարցերի չափաբաժինները

Փորձագետների որակավորման պայմանական կոդերը ըստ համապատասխանության գնահատման ձևերի ուղղությունների և ոլորտների	Հարցերի քանակը առաջադրանքում (հատ)							
	Մտան - դարտացում	Համապատասխանության հավաստում	Հավատարմագրում	Չափագիտություն	Տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն	Որակի կառավարման համակարգեր	Էկոլոգիական կառավարման համակարգեր	Որակավորման ոլորտին առնչվող ներդրման գիտական հարցեր
1	2	3	4	5	6	7	8	9
1 01	3	6	5	4	2	15	5	
1 02	3	6	5	4	2	5	15	
1 03 01 – 1 03 49	5	8	5	4	3	3	2	10
1 04 50 – 1 04 52	3	6	5	3	5	3	5	10
2 01	3	6	6	6	2	15	2	
2 02	3	6	6	6	2	2	15	
2 03 01 – 2 03 49	5	5	5	5	5	3	2	10
2 04 50 – 2 04 52	4	5	5	5	5	3	3	10
3 01	6	6	6	6	12	2	2	

Ծանոթություն Որակավորման կոդերը կրում են պայմանական բնույթ և ունեն հետևյալ նշանակությունը

1 Առաջին միջը ցույց է տալիս համապատասխանության գնահատման ձևը

1 - համապատասխանության հավաստում

2 հավատարմագրում

3 - պետական վերահսկողություն

2 Երկրորդ զույգ միջերը ցույց են տալիս գործունեության ուղղությունները համապատասխանության գնահատման հետևյալ գործառույթներում

ա) համապատասխանության հավաստման գործառույթներում

01-որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացում,

02- էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացում

03-արտադրանքի համապատասխանության հավաստում,

04-ծառայությունների սերտիֆիկացում

բ) հավատարմագրման գործառույթներում

01-որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրում,

02-բնապահպանական (էկոլոգիական) կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրում,

03-արտադրանքի սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրում,

04-ծառայությունների սերտիֆիկացման մարմինների հավատարմագրում

գ) պետական վերահսկողության գործառույթներում

01-արտադրանքի ծառայությունների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների պահպանման պետական վերահսկողություն

3 Երրորդ զույգ միջերը ցույց են տալիս գործունեության ոլորտները ըստ 1-ին Հավելվածի Որոշ պայմանական կոդերում երրորդ զույգ միջերի բացակայությունը ցույց է տալիս, որ փորձագետի որակավորումն առնչվում է որակավորման բոլոր ոլորտների հետ (3 01) կամ հաշվի չի առնվում դրանք (1 01 1 02 2 01 2 02)

Ծանոթություն 2 Թեսթերում (առաջադրանքներում) ընդգրկվող հարցերի չափաբաժինները կախող են վստիստիվել հիմնավորված դեպքերում

Որակավորման թերթի ձևը

Համապատասխանության գնահատման բնագավառի մասնագետի

1. Ազգանունը, անունը, հայրանունը _____
2. Ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը _____
3. Որակավորման պահին զբաղեցրած պաշտոնի անվանումը և այդ պաշտոնին նշանակվելու տարեթիվը _____
4. Թեսթավորման արդյունքը, միավորներով _____
5. Քվեարկությանը մասնակցել են որակավորման հանձնաժողովի _____ անդամներ, որից կողմ են քվեարկել _____ անդամներ
6. Թեսթավորման և հարցազրույցի արդյունքում որակավորման հանձնաժողովի ընդունած որոշումը՝
 Թեսթավորման և հարցազրույցի արդյունքներով _____ -ին
 անվանատառը, ազգանունը
 շնորհվում է (մերժվում է շնորհումը) _____
 գործունեության ոլորտը ուղղությունը համապատասխանության
 փորձագետի (աուդիտորի) որակավորում
 գնահատման ձևում

Հանձնաժողովի նախագահ	անվանատառը, ազգանունը, ստորագրությունը
Հանձնաժողովի անդամներ	անվանատառը, ազգանունը, ստորագրությունը
	անվանատառը, ազգանունը, ստորագրությունը
	անվանատառը, ազգանունը, ստորագրությունը
	անվանատառը, ազգանունը, ստորագրությունը
	անվանատառը, ազգանունը, ստորագրությունը
	անվանատառը, ազգանունը, ստորագրությունը

Որակավորման անցկացման ամսաթիվ 200 թ. _____ « _____ »

Փորձագետների որակավորման վկայագրի ձևը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Առևտրի և տնտեսական զարգացման



Նախարարություն
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ
ՎԿԱՅԱԳԻՐ

Համապատասխանության գնահատման բնագավառի

փորձագետի որակավորման

N AST- -XXXX -XXXX

Նշվում է ՀՍՏ 5.6 ստանդարտով սահմանված համապատասխան տառերը (H, I, J, K, G):
Պետական վերահսկողության փորձագետների համար նշվում է (C) տառը

հերթական համարը

տարեթիվը

Ուժի մեջ է մինչև _____

օրը ամիսը տարեթիվը

Համապատասխանության գնահատման բնագավառի փորձագետների որակավորման հանձնաժողովը հավաստում է, որ

_____ անունը ազգանունը համապատասխանում է _____ նշվում է գործունեության ոլորտը

ըստ սույն ընթացակարգի 1-ին հավելվածի գործունեության ոլորտում և համապատասխանության գնահատման ձևը

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ տնօրեն՝ _____

Գրանցված է փորձագետների վկայագրերի գրանցման մատյանում.

Գրանցման համարը _____ « _____ » _____ 200 թ.

ՀԱՎԵՆՎԱՐՑ 2

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար
 «08-04» 2007թ.
 N-274-հրամանով

Փորձագետների որակավորման ոլորտները

NN	Ոլորտի անվանումը	Պայմանա կան կոդը
1	Միս և մսամթերք , թռչնի միս և ձու	01
2	Ձուկ և ձկնամթերք վերամշակված և պահածոյացված	02
3	Սրգեր և բանջարեղեններ մշակված և պահածոյացված	03
4	Յուղեր (ծեթեր) և ճարպեր կենդանական և բուսական	04
5	Կաթնամթերք և պաղպաղակ	05
6	Մթերք արահաղացային արդյունաբերական, օսլաներ և օսլայամթերք	06
7	Հաց, հացաբուլկեղեն, պրային հրուշակեղեն և մակարոնային արտադրանք	07
8	Շաքար, կակաո, շոկոլադ և հրուշակեղեն շաքարից	08
9	Մանկական սննդամթերք	09
10	Սուրճ, թեյ, համեմունք և ամոքանք	10
11	Խմիչքներ (ալկոհոլային և ոչ ալկոհոլային)	11
12	Ծխախոտ և ծխախոտի արտադրանք	12
13	Նավթ և նավթամթերք	13
14	Օծանելիքակոսմետիկական արտադրանք	14
15	Օճառ, լվացող և մաքրող միջոցներ, կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության արտադրանք՝ թղթից (թաղանթանյութից), բամբակից, քանգիլից	15
16	Պարարտանյութեր	16
17	Ներկեր, լաքեր, լուծիչներ, արգելակային հեղուկներ և հակասառիչներ	17
18	Պլաստմասսայե արտադրանք	18
19	Ռետինե արտադրանք	19
20	Հանքանյութեր, խտանյութեր, ապակե, ճենապակե և հախճապակե արտադրանք	20
21	Շինարարական արտադրանք	21
22	Սև և գունավոր մետաղներից արտադրանք, դրանց թափոններ և քարոտներ	22
23	Էլեկտրական սարքեր և սարքավորանք	23
24	Կապի և հեռահաղորդակցման միջոցներ	24
25	Բժշկական տեխնիկա և չափիչ սարքեր	25
26	Հաստոցներ, կոնստրուկտորներ, պոմպեր	26
27	Խաղալիքներ	27
28	Թեթև արդյունաբերության արտադրանք	28
29	Քաղաքացիական, ծառայողական զենք և դրանց փամփուշտներ, հրատեխնիկական արտադրանք	29
30	Երկակի նշանակության ապրանքների քիմիական զենքի ստեղծման ժամանակ	30
31	Երկակի նշանակության ապրանքներ հրթիռային զենքի ստեղծման ժամանակ	31
32	Երկակի նշանակության ապրանքներ միջուկային զենքի ստեղծման ժամանակ	32

33	Երկակի նշանակության ապրանքներ թունավոր և բակտերիոլոգիական զենքի ստեղծման ժամանակ	33
34	Գազային վառելիքով աշխատող կաթսաներ, ջրատաքացուցիչներ, վառարաններ և այլն	34
35	Գազաշարժային սարքավորումներ	35
50	Սննդի ապահովման ծառայություններ	50
51	Քիմիական մաքրման, ներկման և լվացման ծառայություններ	51
52	Վարավիդային ծառայություններ	52
53	Սեղմված բնական կամ հեղուկացված գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վերասարքավորման ծառայություններ	53